ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաստատված է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Գիտական Խորհրդի
2012թ. _____-ի թիվ _____ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ) ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2012 – 2016 թթ.)

Գյումրի – 2012

Ռազմավարական ծրագիրը ստեղծվել է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) ռեկտորի՝ 2012թ. մարտի 1-ի թիվ 01-03/82 հրամանով ձևավորված Ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կողմից՝ ի կատարումն ՀՊՃՀ ռեկտորի 2012թ. փետրվարի 8-ի 01-03/34 հրամանի թիվ 1 կետի հանձնարարականի:

Կազմողներ՝ Ա.Պապոյան, Վ.Հարությունյան, Բ.Մամիկոնյան, Հ. Սարգսյան

Խմբագիր՝ Դ.Հուսիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4
Մասնաճյուղի առաքելությունը 4
Մասնաճյուղի հեռապատկերը 5
Մասնաճյուղի մնայուն արժեքները 5
Մասնաճյուղն այսօր 6
Մասնաճյուղի 2007-2011 թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքները և հետագա ռազմավարական թիրախները 6
Մասնաճյուղի զարգացման ռազմավարության նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղղությունները 12
Նպատակ 1. 12
Նպատակ 2. 14
Նպատակ 3. 17
Նպատակ 4. 21
Նպատակ 5. 23
Նպատակ 6. 25
Նպատակ 7. 27
Նպատակ 8. 29
Վերջաբան 31

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՀՊՃՀ /Պոլիտեխնիկ/ Գյումրու մասնաճյուղի սույն ռազմավարական ծրագիրը (Ռազմավարական ծրագիր), ինչպես և նախորդները, հանդիսանալով ՀՊՃՀ թվով չորրորդ Ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը, կոչված է ուղղորդել կրթօջախի հետագա զարգացման գործընթացը՝ այն առավելագույնս համապատասխանեցնելով Շիրակի մարզում ի հայտ եկող նոր իրողություններին ու հեռանկարներին:

Հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում Համալսարանի և Մասնաճյուղի գործունեության վերլուծության արդյունքները, բուհական համակարգին առնչվող արտաքին և ներքին միջավայրային փոփոխությունները՝ մշակվել է Մասնաճյողի զարգացման ռազմավարական ծրագիրը՝ որպես նրա գործունեության երկարաժամկետ ծրագիր:

Ծրագրում սահմանված են 2012-2016 թթ. ժամանակահատվածի համար Մասնաճյուղի տեղն ու դերը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում և ՀՊՃՀ կազմում, նրա առաքելությունը, նպատակները, առաջընթացի և սպասվելիք արդյունքների գնահատման ցուցանիշները:

ՀՊՃՀ Գյումրու Մասնաճյուղի սույն ռազմավարական ծրագրի մշակման, մասնաճյուղի առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման համար ուղենիշային է հանդիսացել ՀՊՃՀ 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև ՀՊՃՀ ռեկտորի՝ Համալսարանի խորհրդին ներկայացրած «Զարգացման և բարեփոխումների հայեցակարգը (հիմնադրույթները)» ծրագրային փաստաթղթի դրույթները:

Միևնույն ժամանակ Մասնաճյուղի ռազմավարական ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել ՀՀ Շիրակի մարզին բնորոշ տարածաշրջանային առանձնահատկությունները, միջավայրը, որում իր գործունեությունն է ծավալում Մասնաճյուղը, նրա ներկա վիճակը և նշված գործոններով պայմանավորված զարգացման իրատեսական հնարավորությունները:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Գյումրու Մասնաճյուղը տեխնիկական և տեխնոլոգիական գիտակրթական կողմնորոշմամբ միակ բարձրագույն ուսումնական հաստատություն է ՀՀ Շիրակի մարզուում, որի հիմնական առաքելությունն է.

մինչբուհական, բուհական և հետբուհական, ինչպես նաև շարունակական կրթության ծրագրերով ուսումնական ծառայությունների մատուցումը և գիտական ծրագրերի իրականացումը՝ տարածաշրջանի տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքները բավարարելու նպատակով,

տարածաշրջանի գիտատեխնիկական ներուժի զարգացմանը, արդյունաբերական ու ինֆորմացիոն ենթակառուցվածքների արդիականացմանն ու մրցունակությանը նպաստելը, փոփոխվող սոցիալ-տնտեսական միջավայրում արդյունավետ գործելու

համար դպրոցականներին և ուսանողներին կյանքին, կարիերայի ընտրությանը, մասնագիտական կողմնորոշմանն ու առաջընթացին նախապատրաստելը,
Գյումրիում հիմնադրվող Տեխնոպարկի կայացման հիմնախնդիրների լուծմանը օժանդակելը և մասնակցությունը, նրա համար որակյալ, արդի գիտական և տեխնոլոգիական գիտելիքներով զինված, ակտիվ և ստեղծագործող, նորարարական մտածողությամբ օժտված աշխատակազմի ձևավորմանը նպաստելը:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) կազմում Մասնաճյուղը ձգտում է դառնալ՝
հաստատություն, որի մուտքը և կրթական ռեսուրսները մատչելի են սովորողների ամենատարբեր սոցիալական և տարիքային խմբերին, ՀՀ քաղաքացիներին և արտասահմանցիներին,
հաստատություն, որը հարմարունակ է միջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք է արձագանքում հասարակության և տնտեսության փոփոխվող կարիքներին, աշխատուժի շուկայի պահանջարկին,
հաստատություն, որն ուսանողներին պատրաստում է լիարժեք կարիերայի, մասնագիտական առաջընթացի, նորաստեղծության և ղեկավար դերի համար,
հաստատություն, որն ապահովում է բարձրորակ կրթություն,
հաստատություն, որտեղ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաները ինտեգրված են կրթական և հետազոտական գործընթացներին՝ ապահովելով ուսուցման և հետազոտությունների բարձր արդյունավետություն,
հաստատություն, որն ապահովում է ազատ հաղորդակցության և անկաշկանդ բանավեճի հնարավորություն բոլորի համար, և որտեղ բոլորը կրում են կորպորատիվ պատասխանատվություն զարգացման ընթացքի և արդյունքի համար,
հաստատություն, որը նախաձեռնող է և ձեռներեց, ունակ ապահովելու ֆինանսական կայունություն և համապատասխան սոցիալական երաշխիքներ իր բոլոր աշխատողների համար,
հաստատություն, որն առաջնորդվում է իր գիտակրթական հզոր ներուժի շնորհիվ տեխնոլոգիական կրթության տարածաշրջանային առաջատար կենտրոնը լինելու հեռանկարով:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մասնաճյուղն իր 53-ամյա պատմության ընթացքում ներառել է ԵրՊԻ-ՀՊՃՀ «պոլիտեխնիկականի» լավագույն ավանդույթներն ու արժեքները՝ միաժամանակ ձևավորելով սեփական մնայուն արժեքներ և ավանդույթներ, որոնք միավորում են Մասնաճյուղի դասախոսների և ուսանողների մի քանի սերունդ՝ պարփակելով Գյումրիում և մարզում «պոլիտեխնիկցու» որոշակի նկարագիր:
Մասնաճյուղը եզակի դեր ու պատասխանատվություն է կրում Շիրակի տարածաշրջանի ճարտարագիտական աշխատուժի և արտադրական ղեկավար կազմի վերապատրաստման համար:

Մասնաճյուղը մշտապես զարգացնելու է փոխազդեցությունը տնտեսական միջավայրի հետ և իր ներգրավումը տեղային և տարածաշրջանային նշանակության հանրային ծրագրերում:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՅՍՕՐ

Մասնաճյուղում ուսուցում է կազմակերպվում մինչբուհական և բուհական հետևյալ կրթական ծրագրերով.

- ավագ դպրոցի կրթական ծրագիր
- հիմնական և միջնակարգ լրիվ կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագիր
- բակալավրական կրթական ծրագիր
- մագիստրոսական կրթական ծրագիր
- ճարտարագետ հետազոտողի կրթական ծրագիր:

ՈՒսուցման կազմակերպումը նշված կրթական ծրագրերով նախադրյալներ է ստեղծում ուսանողների շարժունության ապահովման համար, ինչպես Մասնաճյուղի ներսում՝ մի կրթական ծրագրից մյուսի անցումով, այնպես էլ այլ ուսումնական հաստատություններից Մասնաճյուղ տեղափոխվելու իմաստով:

Մասնաճյուղի գիտամանկավարժական ներուժը, առկա նյութատեխնիկական հագեցվածությունը հնարավորություն են տալիս որակյալ մասնագետներ պատրաստել շինարարության, մեքենաշինության, տեքստիլ և թեթև արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի բնագավառների տարբեր մասնագիտությունների գծով:

Մասնաճյուղում ներկայումս սովորում է 985 ուսանող: Ուսանողական համակազմի 8,2%-ը սովորում է ավագ դպրոցի կրթական ծրագրով, 7,6%-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով, 77,9%-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 5,9%-ը՝ մագիստրատուրայի կրթական ծրագրով, և 0,4%-ը՝ հետազոտողի կրթական ծրագրով:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2007-2011 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Մասնաճյուղի նախորդ՝ 2007-2011 թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների ամփոփումն, ըստ գործունեության և զարգացման հիմնորոշ ուղղությունների, հնարավորություն է տալիս արձանագրելու հետևյալ պատկերը.

<u>Ընդունելություն և ուսանողական համակազմ</u>

ա/ Բակալավրական կրթական ծրագիր (առկա ուսուցում)

Դպրոցների շրջանավարտների թվի տարեցտարի շարունակվող նվազումը իր բացասական ազդեցությունն է ունեցել Մասնաճյուղի բակալավրական կրթական ծրագրով առկա ուսուցման դիմորդների թվի վրա (2007 թ.-236, 2008 թ.-215, 2009 թ.-137, 2010 թ.-139, 2011թ.՝ պայմանավորված Հանրապետությունում շրջանավարտների բացակայությամբ - 9 դիմորդ):

բ/ Բակալավրական կրթական ծրագիր (հեռակա ուսուցում)

Հեռակա ուսուցման հատվածում առկա են դրական արդյունքներ: Ընդունելության ցուցանիշները՝ պլանային 455 տեղի դիմաց հաշվետու ժամանակահատվածում

ընդունվել են 461-ը: Ուսանողական համակազմը կայուն է, և վերջին 5 տարում միջին տարեկանը կազմել է 110 ուսանող:

գ/ Միջին մասնագիտական կրթական ծրագիր

Նշված ծրագրով պլանային 475 տեղի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել են 170-ը: Բացի շրջանավարտների թվի նվազումից, հիմնական պատճառներից է նաև այն միջավայրային ֆոնը, որն առկա է ամբողջ երկրում միջին մասնագիտական կրթության համակարգի վերաբերյալ:

դ/ Մագիստրատուրա

2007-2011թթ. ժամանակահատվածում Մասնաճյուղում հաջողվել է ապահովել մագիստրոսական ուսուցման ծրագրով դիմորդների համեմատաբար կայուն համակազմի ձևավորումը: Պլանային տեղերի քանակը այդ տարիներին կազմել է 33-37: Երեք մասնագիտություններից երկուսի գծով (բացի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (թեթև արդյունաբերության ճյուղում)») չի կատարվել վճարովի ուսուցման պլանային տեղերի իրացումը:

<u>Ուսուցման որակ և արդյունավետություն, կրթական բարեփոխումներ</u>

Բարձրագույն կրթության որակի արժևորման Եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշների հիման վրա ՀՊՃՀ-ում մշակված են ուսուցման որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգի ձևավորման հայեցակարգային սկզբունքները և կազմակերպական սխեման: Մասնաճյուղում ստեղծվել է «Կրթության որակի ապահովման և վերահսկման» բաժին, իրականացվել է Մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն:

Մասնաճյուղն ընդլայնել է իր մասնագիտական պրոֆիլը՝ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների անվանացանկը համալրելով մարզում պահանջարկ վայելող արդիական մասնագիտություններով ու մասնագիտացումներով. հնգամյակի կտրվածքով Մասնաճյուղում ներմուծված է 1 նոր մասնագիտություն: Զուգահեռ իրականացվել են առկա մասնագիտությունների վերախմբավորումներ՝ խոշորացման և դրանք ավելի համապիտանի դարձնելու նպատակով, կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային պարբերական նորացումներ՝ աշխատուժի շուկայի պահանջմունքներին հնարավորինս համահունչ դարձնելու նպատակով: Աշխատանքներ են տարվել ընդլայնելու Մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի տեսականին՝ ավագ դպրոցի, միջին մասնագիտական կրթական ծրագրերը իրականացնելու շնորհիվ: Դեռևս չի հաջողվել Մասնաճյուղում կազմակերպել շարունակական և սերտիֆիկացված կրթության իրականացման գործուն մեխանիզմ:

Ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան՝ Համալսարանի շրջանակներում, հաջողությամբ իրականացվել է Մասնաճյուղի անցումն ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին:

<u>Կադրային ներուժ և աշխատանքային միջավայր</u>

Համաձայն Ռազմավարական ծրագրի պահանջի՝ կադրային ներուժի համալրման և որակական բարելավման ուղղությամբ իրականացվել են նպատակային միջոցառումներ. Մասնաճյուղի դասախոսների կատարելագործման դասընթացներին

մասնակցություն, աշխատավարձի կայուն մակարդակների ապահովում, երիտասարդ դասախոսների հավաքագրման համար որոշակի պայմանների ստեղծում, հաստիքների պլանավորման գործընթացի բարելավում ու դրանց օգտագործման արդյունավետության բարձրացում: Ապահովվել է կառուցողական համագործակցության զարգացումը Մասնաճյուղի վարչակառավարչական կազմի, արհեստակցական միության և ուսանողական ինքնավարության մարմինների միջև: Արվել են որոշակի քայլեր աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակի բարձրացման համար:

ՈՒսումնական գործընթացն սպասարկում են 100 դասախոս, որոնցից 5-ը գիտությունների դոկտոր (միջին տարիքը 64,2), 59-ը՝ գիտությունների թեկնածու (միջին տարիքը 53,8), գիտական աստիճան չունեցող անձիք՝ 36, որոնցից մինչև 35 տարին լրացածները՝ 13, իսկ 35 տարին գերազանցողները՝ 23:

Մասնաճյուղում հետևողական աշխատանքներ են տարվել բարելավելու նյութատեխնիկական բազան: Մասնավորապես պլանավորվել և իրականացվել են Մասնաճյուղի լաբորատոր և լսարանային ֆոնդի վերանորոգումներ, ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործման ծրագրեր: Ցավոք, չի հաջողվել իրականացնել Գյումրու մասնաճյուղի տարածքային պայմանների բարելավման խնդիրը: Արդյունքում, Մասնաճյուղում մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) մակերեսների պլանային ցուցանիշը 3.2 ք.մ. է նախատեսված 4.3 -ի դիմաց, իսկ մեկ ուսանողին ընկնող ընդհանուր մակերեսը կազմում է 4.9 ք.մ:

<u>Ֆինանսական կայունություն, ռեսուրսների կառավարում</u>

Դիտարկելով Մասնաճյուղի ֆինանսական գործունեության արդյունքները 2007 – 2011թթ. Ռազմավարական ծրագրով առաջադրված խնդիրների տեսանկյունից՝ կարելի է նշել, որ դրանք, ընդհանուր առմամբ, համահունչ են եղել առաջադրված պահանջներին (բացառությամբ տարածքային պայմանների բարելավման) և նպաստել են Մասնաճյուղի ֆինանսական կայունության ամրապնդմանը: Արդյունքում, անցած հնգամյակի կտրվածքով արձանագրվել են հետևյալ ձեռքբերումները: Արտաբյուջետային մուտքերի աճը 2011 թվականին հաշվետու հնգամյակում կազմել է 38.9%՝ պլանով նախատեսված առնվազն 20% կողմնորոշիչ ցուցանիշի դիմաց: Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների հաշվեկշիռը մշտապես գերազանցել է նախատեսված առնվազն 5%–ը, մասնավորապես 2011թ. այն կազմել է 7.8%: Մասնաճյուղի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը 2006 թ. նկատմամբ, հնգամյակի վերջում կազմել է 56.4% պլանում նշված առնվազն 50% – ի դիմաց: Չի կատարվել նախորդ Ռազմավարական ծրագրով նախատեսված կայունացման ֆոնդի ստեղծման հանձնարարականը, չի հաջողվել կատարել զարգացմանն ուղղվող առնվազն 20% հաշվեկշռի և ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնություն վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքեր 1/10 հարաբերակցության ապահովման հանձնարարականները:

Վերը նշված խնդիրները գործնականում պահպանել են ռազմավարական կարևորությունը և հավակնում են արտացոլվելու նոր Ռազմավարական ծրագրում:

<u>Ինֆորմացիոն ռեսուրսներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ.</u>

Մասնաճյուղի գործունեությունն այս ուղղություններով հանգել է ինֆորմացիոն ռեսուրսների համակողմանի զարգացման ապահովմանն ու դրանց մատչելիության բարձրացմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունների շրջանակի ընդլայնմանն ու արդյունավետության բարձրացմանը: Որպես ընդհանուր գնահատական, կարելի է արձանագրել, որ դրված ռազմավարական խնդիրները հաջողությամբ են լուծվել: Մասնաճյուղի ամբիոններում իրականացվում է ուսումնական ձեռնարկների էլեկտրոնային տարբերակների մշակումը, որոնցից շուրջ 15-ը տեղադրվել են ՀՊՃՀ Web-կայքի «Էլեկտրոնային ուսուցում» էջում, ինչն ապահովում է Մասնաճյուղի ուսանողների համար դրանց դիմելու և օգտագործելու մատչելիությունն ու արդյունավետությունը:

Ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը տեխնիկապես ապահովելու համար Մասնաճյուղում ձևավորված է էլեկտրոնային ուսուցման 3 դասարան: Ուսանողների և ուսումնական գործընթացում օգտագործվող քոմփյութերների քանակական հարաբերակցությունը հնգամյակի վերջում լիովին բավարարել է Ծրագրի պահանջը՝ կազմելով 8 ուսանողին մեկ համակարգիչ: Դասընթացներում քոմփյութերային տեխնոլոգիաներ կիրառող դասախոսների թվաքանակը ևս ապահովվել է՝ գերազանցելով նախանշված 20%-ի կողմնորոշիչ սահմանը:

Անավարտ են մնացել և տեղափոխվել նոր հնգամյակ Մասնաճյուղի միասնական հեռահաղորդակցման տեղեկատվական համակարգի ձևավորման, գրադարանի ռեսուրսների էլեկտրոնային կատալոգի ստեղծման, Մասնաճյուղի առանձին Web-կայքը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ստեղծման և Համացանցում տեղադրման խնդիրները:

<u>Հետազոտական ներուժ և գիտություն.</u>

Մասնաճյուղի հնգամյա գործունեությունն այս ուղղությամբ հիմնականում միտված է եղել պահպանելու և զարգացնելու առկա հետազոտական ներուժը, ինչպես նաև նպաստելու հետազոտությունների ծավալի ու դրանցում դասախոսական կազմի և ուսանողների, հատկապես ասպիրանտների ընդգրկվածության աստիճանի մեծացմանը: Մասնաճյուղին հաջողվել է հետազոտական աշխատանքներում ներգրավել առկա գիտական ներուժի մի մասը, բարձր արդյունավետությամբ օգտագործել Պոլիտեխնիկի ասպիրանտուրայի և հայցորդական ինստիտուտի հնարավորությունները, խթանել գյուտարարական գործունեությունը: Արդյունքում, Ծրագրով նախատեսված առաջընթացի գնահատման ցուցանիշների կտրվածքով առկա են հետևյալ իրողությունները.

հրատարակվել են 323 գիտական հոդվածներ և գիտաժողովների զեկուցումներ, որոնց մասնակցել են դասախոսական կազմի 62%-ը (պլանով՝ 50%), ասպիրանտների 100%-ը (պլանով՝ 100%), մագիստրանտների 30%-ը (պլանով՝ 50%), ստացվել է

գյուտերի 48 արտոնագիր (պլանով՝ 75), պաշտպանվել է 15 ատենախոսություն՝ 14 թեկնածուական, 1 դոկտորական (պլանով՝ 15),

Գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմում աճել է 62,8%-ից 64%-ի, սակայն չի հասել պլանով նախատեսված 70%-ին, որի հիմնական պատճառը գիտական աստիճան ունեցող դասախոսների զգալի բնական կորուստներն են եղել, գիտությունների դոկտորների թիվը 2011-ին կազմել է 5 (պլանով՝ առնվազն 10):

Մասնաճյուղում կատարվող գիտական հետազոտություններից ֆինանսավորվել են միայն պետական բյուջեից՝ թեմատիկ ֆինանսավորման ծրագրով՝

- 2006 թ.-ին՝ 6 թեմա, 5,046 միլիոն դրամ ընդհանուր գումար, 13 մասնակից,
- 2010 թ.-ին՝ 4 թեմա, 6,12 միլիոն դրամ ընդհանուր գումար, 11 մասնակից:

Հնգամյակի վերջում՝ 2010 թվականին ավարտվել են թեմատիկ ֆինանսավորման բոլոր ծրագրերը, որից հետո ՀՀ-ում անցում է կատարվել դրամաշնորհային մրցութային սկզբունքով թեմաների ֆինանսավորման, Մասնաճյուղից ներկայացվել է 12 ծրագիր, որոնք սակայն չեն արժանացել ֆինանսավորման:

Վերն արձանագրված պատկերը լուրջ մտորումների և հետևությունների առիթ է տալիս: Ակնհայտ է, որ նոր հնգամյակում զարգացման ռազմավարական շեշտադրումներն անհրաժեշտ է վերանայել և ուղղել հետազոտությունների ոլորտների ճշգրտմանը, դրանց արդյունավետության բարձրացմանը և առևտրականացմանը, առավելագույնս օգտագործել Գյումրու Տեխնոպարկի հետ գիտական համագործակցության հնարավորությունները:

<u>Արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում.</u>

Մասնաճյուղի արտաքին կապերի զարգացման արդյունքները գնահատելով 2006-2011 թթ. Ռազմավարական ծրագրի պահանջների կատարման տեսանկյունից՝ տեսնում ենք, որ ընդլայնվել և ամրապնդվել են գործընկերային կապերը պատվիրատու կազմակերպությունների հետ. առկա են ձեռնարկությունների հետ կնքված ավելի քան 45 պայմանագրեր (ներառյալ ուսանողների արտադրական պրակտիկաների ապահովմանն ուղղվածները): Հաջողությամբ օգտագործվել են Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումային հնարավորությունները:

Շարունակվել է ամրապնդվել Մասնաճյուղի համագործակցությունը Վրաստանի Հանրապետության Քութաիսի քաղաքի Ա.Ծերեթելու անվան Պետական համալսարանի հետ, որտեղ պարբերաբար կազմակերպված միջազգային գիտաժողովների կազմկոմիտեների աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են Մասնաճյուղի ներկայացուցիչները, շուրջ երեք տասնյակ զեկուցումներով հանդես է եկել Մասնաճյուղի պատվիրակությունը, ավանդական են դարձել ատենախոսական աշխատանքների փոխադարձ գրախոսումները և քննարկումները: Միջազգայնացման ընդլայնման նպաստմանն է ծառայել նաև Մասնաճյուղի կնքած համագործակցության պայմանագիրը «Օրանժ Արմենիա» ընկերության հետ, որի շրջանակներում կազմակերպվում են ուսանողների ու դասախոսների համար օգտակար դասընթացներ և սեմինարներ:

Մասնաճյուղի 2007-2011թթ. Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքները գալիք հնգամյակի համար՝ որպես հետագա զարգացման ռազմավարական հիմնական թիրախներ, առաջադրվում են հետևյալները.

- երաշխավորված ընդունելություն և ուսանողական համակազմ,
- ուսուցման աճող որակ և արդյունավետություն,
- որակյալ կադրային ներուժ և նյութատեխնիկական բազա,
- սոցիալական ծրագրեր և ինֆրակառուցվածք,
- կայուն ֆինանսներ, արդյունավետ և թափանցիկ կառավարում,
- նպատակաուղղված գիտություն և ինովացիա,
- տեղեկատվական համալիր ապահովվածություն,
- զարգացող արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում:

Թվարկված թիրախային գերակայությունները հիմք են ծառայել ՀՊՃՀ Գյումրու Մասնաճյուղի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի ներքոշարադրյալ նպատակների, խնդիրների և դրանց իրագործման ուղղությունների ձևավորման և առաջադրման համար:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն Պ Ա Տ Ա Կ 1
ԱՊԱՀՈՎԵԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՀԱՄԱԿԱԶՄ՝ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ, ԲԱԶՄԱԶԱՆԵՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսանողական համակազմի պահպանումն ու զարգացումը մշտապես մնում է Մասնաճյուղի ռազմավարական հիմնախնդիր: Մոտակա տարիները միարժեքորեն առանձնանալու են դիմորդների հոսքի նվազման կայուն միտումով, ինչն առավել ցայտուն է արտահայտվելու ճարտարագիտական և բնագիտական մասնագիտությունների գծով՝ հատկապես տնտեսական բազում հիմնախնդիրներ ունեցող Շիրակի տարածաշրջանում: Հետևաբար, Մասնաճյուղն իր զարգացման ռազմավարությունում պետք է որպես առաջնահերթ նպատակ սահմանի ուսանողական համակազմի պահպանումը բավարար մակարդակի վրա: Այդ նպատակով Մասնաճյուղը պետք է բազմազանեցնի իր մուտքային հնարավորությունները՝ կրթական ծրագրերը համապատասխանեցնելով աշխատուժի շուկայի կարիքներին: Կարևոր նշանակություն է ստանում շարունակական և սերտիֆիկատային կրթության կազմակերպումը, գործող ավագ դպրոցի և քոլեջի միջոցով դիմորդների կայուն սեփական հոսքերի ձևավորման գործառույթների իրականացումը:

Մասնաճյուղը պետք է ակտիվացնի իր գործունեությունում դիմորդների արտաքին տարածաշրջանային (վիրահայություն, կովկասահայություն) և ներքին (ՌԴ զորակայան) նոր ռեսուրսների օգտագործման և դրանք դեպի Մասնաճյուղ ուղղորդելու հնարավորությունների բացահայտման և կիրարկման ուղղությամբ:

Թվարկված հարցերը թելադրում են հետևյալ խնդիրները:

ԽՆԴԻՐ 1.1. ***Բարելավել Մասնաճյուղի ընդունելության պլանավորումը՝ ըստ կառուցվածքի, առաջարկվող մասնագիտությունների անվանացանկերի ու չափաքանակների՝***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել տարածաշրջանային միջավայրային վերլուծություն մարզի բարձրագույն և միջին մասնագիտական կրթության շուկայի առկա միտումների բացահայտման համար:
- Ձևավորել Մասնաճյուղի մոտակա տարիների ընդունելության մասնագիտությունների նորացված ցանկ և պլանային չափաքանակներ՝ դիմորդների կողմից պահանջարկ չվայելող մասնագիտությունները փոխարինելով նոր պահանջարկված մասնագիտություններով՝ հաշվի առնելով նաև Գյումրու Տեխնոպարկի կայացման ու զարգացման համատեքստում ձևավորվող նոր հեռանկարները:

- Արագ արձագանքել հեռակա ուսուցման ձևով ընդունելության պահանջարկի աճի միտումներին՝ միաժամանակ խթանելով նաև շարունակական և լրացուցիչ կրթության ձևերով ընդունելության իրականացումը:

ԽՆԴԻՐ 1.2. ***Ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ ժողովրդագրական բացասական միտումների պայմաններում դիմորդների կայուն հոսքի և ուսանողական համակազմի պահպանման համար:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ընդլայնել և բազմազանեցնել մարզում Մասնաճյուղի ընդունելության գովազդարշավը:
- Ակտիվացնել Մասնաճյուղի կողմից առաջարկվող ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը: Իրականացնել մասնագիտական կողմնորոշման և գովազդային աշխատանքներ մարզի հիմնական, ավագ դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ դրականորեն ներկայացնելով Մասնաճյուղի մինչբուհական և շարունակական կրթական ծրագրերով ուսումը շարունակելու շահեկան առաջարկները: Խթանել ապագա դիմորդների ճանաչողական այցերը Մասնաճյուղի ամբիոններ:
- Հաստատել փոխշահավետ գործակցային կապեր դպրոցների հետ՝ տեղերում ստեղծելով հենակետային դասարաններ, մատուցելով անվճար խորհրդատվական և նախապատրաստական ծառայություններ դիմորդների համար:
- Ընդլայնել ընդունելությունը հիմնական կրթության հիմքով /9-ամյա կրթություն/ իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ այն դիտարկելով որպես Մասնաճյուղի հիմնական ուսանողական համակազմի լրացման գործուն միջոց:
- Մշակել և իրագործման մեջ դնել իրատեսական գործառույթների պլան՝ վիրահայության և կովկասահայության շրջանակներում Մասնաճյուղի գովազդման ուղղությամբ:
- Մասնաճյուղի ղեկավարության և աշխատակիցների ջանքերը մշտապես նպատակաուղղել Համալսարանի ղեկավարության, քաղաքային, մարզային և հանրապետության իշխանությունների առաջ Մասնաճյուղի շենքային պայմանների բարելավման հարցերը հաստատակամորեն բարձրացնելու գործընթացին՝ համարելով պայմանների բարելավումը որպես կարևորագույն պայման դիմորդների ներհոսք ապահովելու գործում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

Բացառապես կրթության շուկայի պահանջմունքներով պայմանավորված ընդունելության պլանավորում (մասնագիտությունների անվանացանկ և չափաքանակներ):

Հնգամյակի վերջում հեռակա, միջին մասնագիտական, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով առնվազն կրկնապատկված ընդունելություն (2010թ. ցուցանիշի նկատմամբ):

Ընդունելություն հիմնական կրթության հենքի վրա իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ տարեկան 100 - 150:
Մարզի ավագ դպրոցներում գործող Մասնաճյուղի հենակետային դասարաններ՝ 2 - 3:
Մոտավոր Սփյուռքից ուսանողների թիվը 2016թ.՝ 80:
Ընդունելության ընդհանուր ծավալը 2016 թվին բոլոր կրթական ծրագրերով՝ առնվազն 500:
Հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով ուսանողական համակազմը 2016 թվին՝ 2000:

ՆՊԱՏԱԿ 2
ԱՊԱՀՈՎԵԼ ԲԱՐՁՐՈՐԱԿ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՀՈՒՆՉ ՀՊՃՀ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ

Ուսուցման որակի բարձրացումը առաջնահերթ կարևորություն ունի Մասնաճյուղի մասնագիտական բարձր վարկանիշի, նրա ներքին և արտաքին մրցունակության ապահովման համար: Առկա պայմաններում, հաշվի առնելով կրթական ծրագրերի հավատարմագրման նպատակով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականության ապահովման աճող անհրաժեշտությունը և համապատասխան մարմնի ձևավորման իրողությունը (ՄԿՈԱԱԿ), կարևորագույն խնդիր է դառնում Մասնաճյուղի նախապատրաստումը որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին: Հատկապես կարևորվում է Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների կրթական գործունեությանը նախորդող ներքին փորձաքննական արժևորումը և արդյունավետության գնահատումը՝ համաձայն ՄԿՈԱԱԿ-ի չափանիշների:

ԽՆԴԻՐ 2.1. ***Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական գործուն համակարգի ներդնում:***

Ռազմավարության հիմնական ուղությունները

- Ներդնել Համալսարանում ընթացող կրթական ծրագրերի, ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման գործող համակարգերի կատարելագործման գործընթացները՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման կազմակերպական արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:
- Ապահովել Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման գործառույթների առավելագույն թափանցիկությունն ու ընթացիկ արդյունքների անվերապահ հրապարակայնացումը:
- Իրականացնել առկա կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման փուլային գործընթաց՝ մարզի աշխատուժի շուկայի արդի պահանջմունքներին համահունչ:

- Նպաստել կատարելագործելու Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգը՝ ընդլայնելով Մասնաճյուղում վերջինիս ընձեռած հնարավորությունների օգտագործման շրջանակը և բարձրացնելով դրա կիրառման արդյունավետությունը:

ԽՆԴԻՐ 2.2 ***Ապահովել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ դասավանդման և ուսումնառության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացման համար:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մասնաճյուղի դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության բարելավման նպատակով ձևավորել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ: Նպաստել և խրախուսել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ցուցաբերվող նախաձեռնությունները, խթանել հետազոտությունները բարձրագույն և, հատկապես, ճարտարագիտական կրթության մեթոդաբանության ասպարեզում:
- Մշակել և ներդնել դասախոսի մանկավարժական գործունեության ամենամյա պարտադիր գնահատման համակարգ՝ հիմնված ուսանողական հարցումների արդյունքների, դասախոսի ինքնագնահատման թղթապանակի և ամբիոնի գործընկերների կարծիքների համալիր ընդհանրացման սկզբունքի վրա: Ամենամյա գնահատման արդյունքների ամփոփման գործընթացը զուգակցել դասախոսական կազմի տարբերակված վարձատրման, առաջքաշման և խրախուսման (պարգևատրման) գործընթացին՝ սահմանելով Մասնաճյուղում «Լավագույն դասախոս» ամենամյա մրցանակ:
- Մշակել Մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության գնահատման չափանիշներ և կազմակերպել ամենամյա սոցիոլոգիական ոաումնասիրություններ ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ:
- Ներդնել Մասնաճյուղի կողմից դասախոսին տրվող անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի ստեղծման, պատվերի համակարգ՝ ներառելով այն դասախոսի հետ կնքվող պայմանագրի մեջ:
- Որպես որակյալ ուսումնառությանը նպաստող կարևոր գործոն, օժանդակ ուսանողական ծառայությունների զարգացմանը զուգահեռ, Մասնաճյուղում կազմակերպել և իրականացնել ուսումնական գործընթացում ուսանողների և դասախոսների համագործակցությանը և ծառայողական հարաբերումների մատչելիությանը նպաստող և բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը միտված միջոցառումներ (վիկտորինաներ, մարզական խաղեր և այլն):

ԽՆԴԻՐ 2.3. ***Նախապատրաստել Մասնաճյուղը Համալսարանի համակազմում իր կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Լրամշակել Մասնաճյուղի գործունեության կրթական ոլորտների ինքնագնահատման առկա չափանիշները՝ հիմք ընդունելով Համալսարանում կիրառվելիք եվրոպական հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի հավատարմագրման չափանիշները:
- Իրականացնել Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների գործունեության նախկինում իրականացված ինքնավերլուծության արդյունքում մշակված բարելավող միջոցառումների պլանների և կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականների համադրական վերլուծություն՝ ըստ ֆակուլտետների և բաժանմունքների, և գնահատել արդյունքները ՄԿՈԱԱԿ– ի սահմանած չափանիշների տեսանկյունից:
- Ելնելով ուսումնական ստորաբաժանումների գործունեության ինքնագնահատման և կրթական ծրագրերի վերլուծության և որակի գնահատման ներհամալսարանական գործընթացների արդյունքներից՝ նախապատրաստել և նախաձեռնել ՄԿՈԱԱԿ-ի կողմից Համալսարանի համակազմում Մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթաց:
- Իրականացված արտաքին գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա մշակել կրթական ծրագրերի հետագա բարեփոխման և կրթության որակի շարունակական բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ, կրթական ծրագրերի վերլուծության և որակի ամենամյա գնահատման պրակտիկա՝ համահունչ Համալսարանում ընդունված չափանիշների պահանջներին՝ սկսած 2012 թ.:
- Առաջարկվող մասնագիտությունների էապես վերանայված ցանկ՝ համապատասխանեցված աշխատաշուկայի առկա պահանջմունքներին:
- Մասնաճյուղի շրջանավարտներից և կրթական ծրագրերից գործատուների բավարարվածության պարբերական տարեկան ուսումնասիրություններ՝ սկսած 2012/13 ուստարվանից:
- Մասնաճյուղի դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:
- Ուսումնառությունից Մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատման գործող համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:
- Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների ՝ 2012 - 2013 թթ.:
- Մասնաճյուղի կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրում՝ գործընթացի ավարտը 2015թ.:

ՆՊԱՏԱԿ 3
ԱՊԱՀՈՎԵԼ ՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀՊՃՀ ԿԱՁՄՈՒՄ, ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի ուժեղ կողմերից մեկը մնում է բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմի առկայությունը՝ որպես անհրաժեշտ մակարդակի կրթության ապահովման գրավական: Դասախոսական կազմի պահպանումը և երիտասարդացումը, նրա մասնագիտական առաջընթացի ապահովումը և որակյալ ռեզերվի ձևավորումը առաջիկա տարիներին ևս հանդիսանալու են ռազմավարական կարևորության թիրախներ: Կարևոր է նաև որակյալ վարչակազմի առկայությունը և երիտասարդացումը: Ռազմավարական խնդիր է Մասնաճյուղի կադրային ներուժի օպտիմալ և արդյունավետ օգտագործումը, հաստիքային խնայողական քաղաքականության վարումը:

Մասնաճյուղի զարգացման խնդիրներն ու ծրագրերը պահանջում են կատարելագործել Մասնաճյուղի կառավարման համակարգը, ներդաշնակեցնել այն Համալսարանի կառավարման համակարգի հետ՝ բարձրացնելով արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Կարևորագույն խնդիր է Մասնաճյուղում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովումը, դասախոսական անձնակազմի և ուսանողության միջև փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված թափանցիկ աշխատանքային փոխհարաբերությունների ձևավորումը, հաջողությունների և անհաջողությունների համար կորպորատիվ պատասխանատվության սերմանումը: Այս ամենը կնպաստի Մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և կոռուպցիայի ցանկացած դրսևորման դեմ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

ԽՆԴԻՐ 3.1. ***Շարունակել բարելավել և համալրել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Իրականացնել Մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում)՝ ըստ հրամցվող կրթական ծրագրերի որակի ապահովման և զարգացման պլաններին համապատասխանության պահանջների:
- ՀՊՃՀ համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ մշակել և իրականացնել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման երկարաժամկետ ծրագիր՝ թարմացնելով և բազմազանեցնելով որակավորման բարձրացման կրթական ծրագրերն ու ձևերը, կատարելագործելով դասախոսական պաշտոնների տեղակալման պահանջվող չափանիշներն ու գործընթացները:
- Մշակել և իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի համալրման երկարաժամկետ ծրագիր՝ ուղղորդելով Մասնաճյուղի բարձր առաջադիմությամբ

շրջանավարտներին դեպի Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելություն՝ դասախոսական կազմի համալրման առաջնահերթ կարիքների ապահովման համար:
- Ապահովել Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի մասնակցությունը դասախոսների կատարելագործման համալսարանական ծրագրին:
- Ներդնել դասախոսի գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների գործուն համակարգ և հավաստի գնահատման ընթացակարգ: Գնահատման արդյունքները հիմք ընդունել միջտարակարգային առաջընթացի և աշխատավարձի բարձրացման համար:
- Խթանել դասավանդման արդյունավետության բարձրացումը Մասնաճյուղում, հիմնել պարգևներ լավագույն մանկավարժական-մեթոդական փորձի ճանաչման, լուսաբանման և խրախուսման համար:

ԽՆԴԻՐ 3.2. ***Բարելավել հաստիքացուցակների ձևավորման գործընթացը և դրանց օգտագործման արդյունավետությունը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջընթացին:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Բարձրացնել դասախոսական հաստիքակազմի օգտագործման արդյունավետությունը՝ ուսումնական գործընթացի պլանավորման բարելավման, այդ թվում՝ դասընթացների միջառարկայական, միջֆակուլտետային միասնականացման և ուսանողական հոսքերի խոշորացման միջոցով:
- Շարունակել ուսանողների, դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի թվաքանակների միջև քանակական հարաբերակցությունների լավարկման գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովել հստակ հիմնավորված, որակին չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:
- Ռազմավարական նոր խնդիրների պահանջների համատեքստում վերանայել և սահմանել նոր չափորոշիչներ Մասնաճյուղի վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման և վերջիններիս ներկայացվող որակական պահանջների ձևավորման համար:
- Իրականացնել Մասնաճյուղի վարչակազմի փուլային երիտասարդացման քաղաքականություն, ստեղծել կայուն ռեզերվ և մրցակցային միջավայր՝ կառավարման կառույցների և ստորաբաժանումների ղեկավար կազմի որակյալ համալրումն ապահովելու նպատակով:

ԽՆԴԻՐ 3.3. ***Շարունակել կատարելագործել Մասնաճյուղի կառավարման համակարգը և բարձրացնել դրա արդյունավետությունն ու որակը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ներմուծել Մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ և այն հիմք ընդունել Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար:

- Ապահովել Մասնաճյուղում տեխնոլոգիապես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուր կառավարելի դարձնելու համար:

ԽՆԴԻՐ 3.4. ***Ապահովել ուսանողական ինքնավարության ընդլայնման և խորացման կայուն գործընթաց Մասնաճյուղում :***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը Մասնաճյուղում՝ ընդլայնելով և խորացնելով ուսանողների մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:
- Աջակցել Մասնաճյուղի ուսանողական խորհրդի արտաքին կապերի զարգացմանը, նրա ներգրավմանը համահայաստանյան ուսանողական կազմակերպություններում և ծրագրերում:
- Մեծացնել Մասնաճյուղի ուսանողական խորհրդի դերը կառուցվածքային, ծրագրային և կազմակերպական փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացներում:
- Նպաստել ուսանողական ինքնավարության մարմինների և Մասնաճյուղի վարչակառավարչական կազմի ու արհեստակցական միության միջև կառուցողական համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը:

ԽՆԴԻՐ 3.5. ***Ստեղծել նպաստավոր պայմաններ և մթնոլորտ Մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, բարձրացնել աշխատակիցների և ուսանողների «հակակոռուպցիոն գրագիտության» մակարդակը:***

Ռազմավարության հիմնական ողղությունները

- Համահամալսարանական ծրագրերի համատեքստում մշակել և իրականացնել Մասնաճյուղի հակակոռուպցիոն քաղաքականությունն ապահովող միջոցառումների հեռանկարային պլան-ծրագիր՝ պարտադիր տարեկան վերլուծական հաշվետվություններով և արդյունքների լայն հրապարակայնացմամբ:
- Ըստ ամենայնի նպաստել Մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների կանխարգելման և դրանց դեմ պայքարի մշտական հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու թափանցիկության ապահովմանը:
- Մասնաճյուղի աշխատողների և ուսանողների համար ստեղծել կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հավաստի տեղեկատվությունը տեղ հասցնելու համար մատչելի ու ժամանակակից հնարավորություններ և ձևեր:
- Խստացնել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմները՝ ապահովելով անհրաժեշտ վարչական վերահսկողություն և գործառույթների թափանցիկություն Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներում:
- Նպաստել ուսանողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

- Ապահովել ուսանողների և աշխատողների հնարավորինս լայն շերտերի ընդգրկումը Մասնաճյուղի հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորման և դրա կյանքի կոչման գործընթացներում:
- Նպաստել Մասնաճյուղի հակակոռուպցիոն միջոցառումներում (նպատակային հետազոտություններ, սոցիոլոգիական հարցումներ, ընթացիկ մոնիթորինգներ և այլն) ուսանողական կազմակերպությունների պարտադիր մասնակցությանն ու դերի բարձրացմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ առնվազն 65%:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման ռեյթինգային համակարգի առկայություն:
- Պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ՝ կախված դասախոսի ռեյթինգից:
- ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 150%-ը կազմող պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձ՝ 2016թ.:
- Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում՝ 2016 թվին 2011-ի համեմատ՝ առնվազն 10%-ով:
- Ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:
- Ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:
- Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) համակարգ:
- Տարեկան հաշվետվության նոր ձևաթերթ՝ ՀՊՃՀ գործունեության ԳԱՑ-երի հիման վրա:
- Գործուն հակակոռուպցիոն քաղաքականություն՝ իրականացմանը նպաստող պայմանների, մեխանիզմների և գործընթացների համակարգով:

ՆՊԱՏԱԿ 4
ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ, ԶԱՐԳԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կրթական և հետազոտական ծրագրերի պատշաճ մակարդակի ապահովման ռազմավարական խնդրի հաջողության կարևորագույն գրավականն է համարժեք նյութատեխնիկական բազայի ապահովումը: Այն ենթադրում է առկա բազայի մշտական նորացում, արդիականացում և դրա համապատասխանեցում որակի շարունակաբար բարձրացող պահանջներին: Այս տեսանկյունից առաջիկա հնգամյակում կրկին կարևորվում են Մասնաճյուղի մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման փուլային ծրագրերի ձևավորումն ու իրականացումը, ներառյալ առկա լսարանային ֆոնդի հետագա բարելավումն ու տեխնիկական

հանդերձավորումը՝ ուսումնառության կազմակերպման ժամանակակից տեխնիկական պայմանների ապահովման նպատակով:
Հետագա զարգացման և կատարելագործման առաջնահերթ խնդիր է հանդիսանում Մասնաճյուղում առկա ուսումնագիտական լաբորատոր բազայի վերազինումն ու ընդլայնումը:

ԽՆԴԻՐ 4.1. ***Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները:***

Ռազմավարության հիմնական ողղությունները

- Պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ, պարբերական վերակառուցումներ և վերանորոգումներ, արդիականացում և համապատասխանեցում կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի զարգացման խնդիրներին:
- Ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան:
- Ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող կազմտեխնիկայով և սարքավորումներով:

ԽՆԴԻՐ 4.2. ***Ապահովել Մասնաճյուղի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումը ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:
- Համալսարանի աջակցությամբ ինտեգրվել «Ազգային ճարտարագիտական լաբորատորիա» ծրագրին՝ նորագույն ուսումնագիտական սարքավորումներով Մասնաճյուղի լաբորատորիաները կահավորելու համար:
- Զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ նպատակաուղղելով դրանք առաջին հերթին ուսանողության կրթական պահանջմունքների բավարարմանը:
- Նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու և նվիրատու կազմակերպությունների ու անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին:
- Մասնաճյուղի և Գյումրու տեխնոպարկի միջև կնքել համագործակցության պայմանագիր վերջինիս լաբորատորիաները ուսումնական նպատակներով օգտագործելու համար:

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ Մասնաճյուղի սպորտային բացօթյա մարզահրապարակը գործարկելու, ինչպես նաև փակ դահլիճում ուսումնական պարապմունքների իրականացման հնարավորություն ստեղծելու նպատակով:

ԽՆԴԻՐ 4.3. ***Զարգացնել Մասնաճյուղի հիմնական սոցիալական ծրագրերը, ապահովել սոցիալական ինֆրակառուցվածքի պահպանումն ու նյութատեխնիկական պայմանների բարելավումը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել և իրականացնել աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակի շարունակական բարելավման երկարաժամկետ ծրագիր՝ նախատեսելով սոցիալական ծրագրերին և միջոցառումներին հատկացումների հաշվեկշռի պարբերական ավելացում Մասնաճյուղի բյուջեում:
- Ապահովել հիմնական սոցիալական ծրագրերի ենթակառուցվածքի պահպանումը, համակողմանի զարգացումն ու մատչելիությունը Մասնաճյուղի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար՝ լայնորեն օգտվելով նաև ՀՊՃՀ մարզաառողջարարական բազաներից և այլ հնարավորություններից:
- Նպաստել մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացմանը Մասնաճյուղում, խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը Համալսարանի մշակութային և մարզական կյանքին:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

Նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային և տարեկան պլանների առկայություն և կատարողական:

Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսները՝ ոչ պակաս, քան պետական նորմատիվով սահմանված 8 ք.մ.:

Ն Պ Ա Տ Ա Կ 5

ՊԱՀՊԱՆԵԼ ՀՊՃՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի բնականոն գործունեության և առաջընթացի կարևորագույն երաշխիքը նրա ֆինանսական կայունության պահպանումն է: Պլանավորվող հնգամյակում սպասվում է արտաբյուջետային մուտքերի զգալի նվազում՝ պայմանավորված 2011/2012 ուստարվա ընդունելության վատ ցուցանիշներով: Այս ֆինանսական կորուստները Մասնաճյուղը կարող է փոխհատուցել այլ, օրենքով չարգելված գործունեությամբ զբաղվելու և մատուցվող վճարովի ծառայությունների ցանկի ընդլայնման միջոցով՝ ապահովելով արտաբյուջետային լրացուցիչ մուտքեր: Սրան կնպաստի նաև նոր կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը, որը կապահովի վճարովի համակարգում

ուսանողների լրացուցիչ հոսքեր: Այսպիսով, ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը և ֆինանսական ներհոսքի մեծացումը շարունակում է մնալ Մասնաճյուղի համար կարևորագույն ռազմավարական խնդիր:

ԽՆԴԻՐ 5.1. ***Նպատակաուղղել Մասնաճյուղի ֆինանսական պլանավորումը առաջադրված ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործմանը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Շարունակաբար բարելավել Մասնաճյուղի տարեկան բյուջեները հիմնավորված ձևով կազմելու համակարգը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:
- Սահմանել տարեկան կողմնորոշիչ համամասնություններ՝ Մասնաճյուղի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև:
- Նպատակ ունենալով Մասնաճյուղի բարձր որակավորմամբ անձնակազմի պահպանման խնդիրը՝ կայունացման և ռիսկերից ապահովագրման Մասնաճյուղային ֆոնդը պահպանել հնարավորինս բարձր մակարդակի վրա:

ԽՆԴԻՐ 5.2. ***Բազմազանեցնել Մասնաճյուղի ֆինանսական ներհոսքերի աղբյուրները՝ ապահովելով դրանց մեծացումը Մասնաճյուղի զարգացման կարիքներին համապատասխան:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Բազմազանեցնել և ընդլայնել արտաբյուջետային միջոցների աղբյուրները՝ լավարկելով ֆինանսական աղբյուրների ռիսկերի կառավարումը:
- Մասնաճյուղի եկամուտների ընդհանուր ծավալում մեծացնել կրթական, գիտական ու տեղեկատվական վճարովի ծառայություններից գոյացած միջոցների հաշվեկշիռը՝ դրանց ցանկի ընդլայնման և եկամտաբերության բարձրացման ճանապարհով:

ԽՆԴԻՐ 5.3. ***Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետության հետագա բարձրացումը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Կատարելագործել Մասնաճյուղի ֆինանսական կառավարումը՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման տեղեկատվական համակարգերի լայնածավալ ներդրման և կադրային կազմի պարբերական վերապատրաստման ու համալրման միջոցով:
- Իրականացնել ընդգծված ռեսուրսախնայողական քաղաքականություն: Մշակել և ներդնել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլ նյութական ռեսուրսների խնայողության տեխնիկական և կազմակերպչական նոր, առավել արդյունավետ միջոցներ:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով) 2016 թվականին.

Արտաբյուջետային մուտքերի աճ 2012թ. նկատմամբ՝ առնվազն 20%:

2012թ. վերջում ստեղծել կայունացման ֆոնդ առնվազն 20 մլն դրամի սահմաններում և մինչև 2016թ.-ը այդ ֆոնդին փոխանցել յուրաքանչյուր տարվա տարեկան բյուջեի առնվազն 5%-ը:

Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը (ներառյալ կառուցվածքային ստորաբաժանումների ֆոնդերի մասհանումները)՝ առնվազն 10%:

Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 10%:

- Աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը՝ առնվազն 20%:
- Աշխատավարձի և սոցիատկացումների տոկոսային բաժնեմասը 2012թ. բյուջեով կազմող 80%-ից մինչև 2016թ.-ը նվազեցնել առնվազն 10%-ով (ցուցանիշը դարձնել 70%)՝ հաստիքների օպտիմալացման և աշխատավարձին ուղղված միջոցների արդյունավետ օգտագործման շնորհիվ:
- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) և Համալսարանի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը՝ 1/10:

ՆՊԱՏԱԿ 6
ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Մասնաճյուղի գործունեության համակողմանի ինֆորմատացումը շարունակում է մնալ հերթական հնգամյակի հիմնական ուղենիշներից մեկը: Նախատեսվում է իրականացնել Մասնաճյուղում ժամանակակից էլեկտրոնային ուսուցման ծրագրերի մշակում և լայնամասշտաբ կիրառում, ներքին ու արտաքին ինֆորմացիոն ռեսուրսների մատչելիության ապահովում ուսանողներին ու դասախոսներին:

Մասնաճյուղի ինֆորմատացման ծրագրի մյուս նշանակետը մնում է ՀՊՃՀ կենտրոնական կրթահամալիրի միասնական ինֆորմացիոն համակարգում ինտեգրվելը:

ԽՆԴԻՐ 6.1. ***Ապահովել ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը Մասնաճյուղի կրթական ու գիտական բոլոր գործընթացներում:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ապահովել տեխնոլոգիական կարողությամբ և հեռաուսուցման լսարանների Մասնաճյուղային առկա ցանցի ընդլայնման ու տեխնիկական կատարելագործման գործընթաց, ՀՊՃՀ կենտրոնական կրթահամալիրի և Մասնաճյուղի միջև հեռաուսուցման կազմակերպում:
- Մասնաճյուղի մասնաշենքերում բոլոր ամբիոնների ու բաժինների համար ապահովել անլար ինտերնետային կապ՝ Wi-Fi տեխնոլոգիայի միջոցներով:

- Քոմփյուտերացնել Մասնաճյուղի գրադարանը, ստեղծել բոլոր ռեսուրսների էլեկտրոնային կատալոգները:
- Գրադարանում ստեղծել ուսանողների օգտագործման Ինտերնետի Ազատ Մուտքի սենյակ (էլեկտրոնային ընթերցասրահ)՝ Wi-Fi տեխնոլոգիայի անլար ինտերնետային կապով՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության, գիտելիքների գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը Մասնաճյուղի բոլոր ուսանողների համար:
- Խթանել և խրախուսել Մասնաճյուղում էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակումն ու ներդրումը, վիրտուալ ուսումնական լաբորատորիաների հետագա զարգացումը:
- Խթանել ինֆորմացիոն տեխնոլոգիաների լայն կիրառությունը Մասնաճյուղի գիտական հետազոտություններում, նախագծերում և ատենախոսություններում:
- Ստեղծել և թողարկել Մասնաճյուղի միասնական ցանցային տեղեկատվական համակարգը:
- Բարելավել Մասնաճյուղում կատարվող հետազոտական աշխատանքների ինֆորմացիոն ապահովվածությունը, նորագույն ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունն այդ աշխատանքներում:
- ՀՊՃՀ www.seua.am կայքում արդիականացնել և ընդլայնել Մասնաճյուղի էջը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:
- Ստեղծել և տեղադրել Համացանցում Մասնաճյուղի առանձին Web-կայքը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

ԽՆԴԻՐ 6.2. ***Մասնաճյուղում ձևավորել միասնական ինֆորմացիոն համակարգ՝ ապահովելով անընդհատ աճող տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարում:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Շարունակել զարգացնել և արդիականացնել Մասնաճյուղի կորպորատիվ քոմփյութերային ցանցը՝ միասնական ինֆորմացիոն համակարգի հուսալիության և պաշտպանվածության պահանջներին համահունչ:
- Ձևավորել Մասնաճյուղի կառավարման միասնական ինֆորմացիոն համակարգ՝ տեղեկատվության ավտոմատացված մշակման և կառավարման համապատասխան ծրագրային միջոցներով:
- Իրականացնել Մասնաճյուղի միասնական ինֆորմացիոն համակարգից օգտվողների վարժանքներ՝ համակարգի արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակով:
- Ներմասնաճյուղային կառավարման համակարգում զարգացնել տեղեկացման էլեկտրոնային ձևերի կիրառումը և սկսել ներքին փաստաթղթաշրջանառության մեջ էլեկտրոնային ստորագրության պրակտիկայի աստիճանական ներդրման գործընթաց:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

Մասնաճյուղի համակարգիչների թիվը՝ առնվազն 200 (5 ուսանողին 1 համակարգիչ):

Մասնաճյուղի մասնաշենքերում բոլոր ամբիոնների ու բաժինների համար անլար ինտերնետային կապ:

Ինտերնետին միացված համակարգիչների հաշվեկշիռը՝ առնվազն 80%:

Մուլտիմեդիական միջոցների հավաքածուով հագեցված 12 լսարան:

Ինտերնետի կիրառությամբ ուսուցման (on-line) 8 լսարան:

Էլեկտրոնային տարբերակով ուսումնական նյութեր՝ դասընթացների առնվազն 50%-ի համար:

Մասնաճյուղի գրադարանի ռեսուրսների էլեկտրոնային կատալոգ:

Գրադարանում ուսանողների օգտագործման էլեկտրոնային ընթերցասրահ՝ անլար ինտերնետային կապով:

Մասնաճյուղի միասնական հեռահաղորդակցական տեղեկատվական համակարգ վիրտուալ միջավայրում և Գյումրու Տեխնոպարկի կենտրոններում կատարվող լաբորատոր աշխատանքներ և գիտական փորձարարական հետազոտություններ՝ առնվազն 50%:

Մասնաճյուղի առանձին Web-կայքը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ տեղադրված Համացանցում:

Ն Պ Ա Տ Ա Կ 7

ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՆՈՎԱՑԻՈՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի գիտահետազոտական առաքելությունը ենթադրում է գիտական ներուժի անընդհատ համալրում, ամբիոնների ակտիվ մասնակցություն տարածաշրջանի տնտեսական զարգացման և միջազգային գիտական ծրագրերում, կատարվող հետազոտությունների արդյունքների առևտրականացման խթանում: Այս ամենը նպատակ ունի դարձնելու Մասնաճյուղը Շիրակի մարզի առաջատար գիտատեխնիկական կենտրոն և ապահովելու դասախոսական կազմին, ասպիրանտներին և մագիստրանտներին հետազոտական ծրագրերում առավելագույնս ընդգրկելու համար:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով ՀՀ-ում թեմատիկ ֆինանսավորման գիտական ծրագրերի կտրուկ նվազեցման միտումը, խիստ կարևորվում է գալիք հնգամյակում Մասնաճյուղի մասնակցության ընդլայնումը բազային ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտություններում, Գյումրու Տեխնոպարկի հետ գիտատեխնիկական համագործակցության ոլորտում, միջազգային գիտական ծրագրերում, կիրառական հետազոտությունների արդյունքների առևտրականացման խթանում:

ԽՆԴԻՐ 7.1. ***Ապահովել Մասնաճյուղի մասնագիտությունների գծով գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով՝ Մասնաճյուղի գիտամանկավարժական ներուժի***

անընդհատ համալրման ու երիտասարդացման նաև տարածաշրջանային պահանջարկի բավարարման նպատակով:

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մշակել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման հեռանկարային հնգամյա պլան՝ ելնելով հետազոտական աշխատուժի ներքին և արտաքին շուկայի պահանջմունքներից:
- Ապահովել Մասնաճյուղի ամբիոնների մասնագիտությունների գծով ՀՊՃՀ և միջպետական ասպիրանտուրայի ընդունելության աճը, անվճար ասպիրանտական տեղերի հայտավորումը նպատակաուղղել բացառապես Մասնաճյուղի զարգացման ռազմավարական նպատակների և խնդիրների բավարարմանը, Մասնաճյուղին հատկացվող ասպիրանտական տեղերն ապահովել բարձր մասնագիտական պատրաստականություն ունեցող դիմորդներով:
- Արդյունավետ օգտագործել ՀՊՃՀ հայցորդական ինստիտուտի հնարավորությունները ճարտարագետ հետազոտողների և գիտությունների թեկնածուների պատրաստման նպատակով, հայցորդների ատենախոսական աշխատանքների ղեկավարմանը առավելագույնս ներգրավել երիտասարդ գիտնականներին:
- Ուժեղացնել ատենախոսական աշխատանքների կատարման հսկողությունը, պարբերաբար արդիականացնել դրանց թեմատիկան, կապել դրանք Մասնաճյուղում իրականացվող հետազոտական նախագծերի և տարածաշրջանի տնտեսական հիմնախնդիրների հետ:
- Բարձրացնել դոկտորանտուրայի միջոցով բարձրագույն որակավորման գիտամանկավարժական կադրերի պատրաստման արդյունավետությունը, առավելագույնս օգտագործել տեղական և միջպետական դոկտորանտուրայի հնարավորությունները:
- Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:
- Ակտիվացնել Մասնաճյուղի ներկայացուցչությունը գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդների կազմերում:

ԽՆԴԻՐ 7.2. ***Մեծացնել Մասնաճյուղի հետազոտական նախագծերի թիվն ու ֆինանսավորման ծավալները, ուղղել դրանք տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Մեծացնել հետազոտական նախագծերի թիվն ու ֆինանսավորման ծավալները, ձգտել ամբիոնների գիտական ներուժի համատարած ներգրավվածությանն այդ նախագծերում:
- Առավելագույնս օգտագործել գիտական համագործակցության հնարավորությունները ՀՊՃՀ կենտրոնական կրթահամալիրի ամբիոնների հետ, ընդգրկվել նրանց կողմից իրականացվող գիտական ծրագրերում, կատարել համատեղ գիտական հետազոտություններ:

- Մշակել և ներդնել դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման հստակ չափանիշներ՝ որակի գնահատման ներմասնաճյուղային համակարգի շրջանակներում, և գնահատման արդյունքները հաշվի առնել դասախոսների առաջքաշման գործընթացներում:
- Մշակել մեխանիզմներ երիտասարդ գիտնականների ներգրավման, նրանց սոցիալ-տնտեսական խրախուսման համար: Խրախուսել երիտասարդ գիտական կադրերի պատրաստման առաջատար գիտական ղեկավարներին:
- Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և նյութատեխնիկական բազա՝ նանոտեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի, տեքստիլ տեխնոլոգիաների բնագավառների հետազոտությունների խթանման համար, առավելագույնս օգտագործել վիրտուալ միջավայրում գիտափորձերի կատարման հնարավորությունները:
- Ծավալել համագործակցություն նախագծային կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների հետ՝ նպատակ ունենալով գիտատեխնիկական խնդիրների համատեղ լուծումը և գիտական մշակումների արմատավորումը արտադրությունում:
- Ընդլայնել գիտական համագործակցությունը Գյումրու Տեխնոպարկի, ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմալոգիայի (ք. Գյումրի) ինստիտուտի հետ՝ գիտական ծրագրերի համատեղ կատարման նպատակով:
- Մշակել անհրաժեշտ մեխանիզմներ գյուտարարական գործունեության և իննովացիոն մշակումների զարգացման և դրանց արդյունքների առևտրականացման համար:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները (հինգ տարվա կտրվածքով).

Թեկնածուական 13 և դոկտորական 2 ատենախոսությունների պաշտպանություն:

Գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմում՝ առնվազն 65%:

Առնվազն 2 պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծում:

Ֆինանսավորվող հետազոտական նախագծերի թիվը՝ առնվազն 8, տարեկան ֆինանսավորման ծավալը՝ առնվազն 10 միլիոն դրամ:

Հրատարակած գիտական հոդվածների թիվը՝ առնվազն 370:

Ստացված գյուտերի արտոնագրերի թիվը՝ առնվազն 22:

Ն Պ Ա Տ Ա Կ 8
ԸՆԴԼԱՅՆԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ, ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՎ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Ռազմավարական պլանում շարադրված նպատակների իրականացումը մեծապես կախված է Մասնաճյուղի արտաքին գործընկերային կապերի համակողմանի ամրապնդումից և զարգացումից: Դրանք կոչված են ներգրավելու Մասնաճյուղի շրջանավարտներին, տարբեր հովանավորներին և բարերարներին Մասնաճյուղի կողմից արտաքին կապեր հիմնելու և զարգացնելու, ինչպես նաև համատեղ

գիտաուսումնական ծրագրերի իրականացմանը, որոշակի նյութական աջակցության ցուցաբերմանը:
Արտաքին կապերի մյուս առաջնային ուղղությունը դա Համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերում Մասնաճյուղի ներգրավումն ու մասնակցության ընդլայնումն է:

ԽՆԴԻՐ 8.1. ***Ձևավորել և զարգացնել երկարաժամկետ գործընկերային կապերը Մասնաճյուղի մասնագիտությունների բազային կազմակերպությունների հետ:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել երկարաժամկետ պայմանագրային հարաբերություններ հիմնական գործատու կազմակերպությունների հետ, զարգացնել և տարածել ընկերությունների հետ համատեղ ուսումնական կենտրոնների ստեղծման ՀՊՃՀ կենտրոնական կրթահամալիրի արդյունավետ փորձը, հատկապես կարևորել Գյումրու Տեխնոպարկի հետ երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձևավորումը:
- Ստեղծել ՀՊՃՀ-ի շրջանակներում Մասնաճյուղի դերակատարմանը համապատասխան «Մասնաճյուղ - արդյունաբերություն» փոխկապակցության գործուն համակարգ, ընդայլնել Մասնաճյուղի կողմից մատուցվող խորհրդատվական և այլ բնույթի ծառայությունները պարտնյոր կազմակերպություններին:
- Ձգտել Մասնաճյուղի անմիջական ներգրավմանն ու մասնակցությանը ՀՊՃՀ-ի կողմից իրականացվող միջազգային նախագծերում և ծրագրերում: Ապահովել Մասնաճյուղի բոլոր ամբիոնների մասնակցությունն այդ ծրագրերում:

ԽՆԴԻՐ 8.2. ***Ամրապնդել հասարակության հետ Մասնաճյուղի կապերի զարգացման և դրական իմիջի պահպանման առկա փորձը, ապահովել հանրային ծրագրերում Մասնաճյուղի առավելագույն ներգրավումը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ընդլայնել և բազմազանեցնել հասարակության հետ Մասնաճյուղի կապերը, շարունակել զարգացնել ակտիվ համագործակցությունը ԶԼՄ-ների հետ, օպերատիվ լրատվությունը, սեփական գովազդային նյութերի հրատարակումը:
- Նպաստել Մասնաճյուղի ներգրավմանը հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային ծրագրերում, ստեղծել հանրօգուտ նոր ծառայություններ՝ հատկապես հաշվի առնելով Մասնաճյուղում առկա տեղեկատվական - խորհրդատվական բազմակողմանի ներուժը:
- Նպատակաուղղել լրատվական-գովազդային և մարքեթինգային բոլոր միջոցառումները Մասնաճյուղի դրական իմիջի պահպանմանն ու ամրապնդմանը, նրա հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացմանը:

ԽՆԴԻՐ 8.3. ***Ձգտել Մասնաճյուղի զարգացման նախագծերի արտաքին հովանավորների հավաքագրմանը, հասարակական հարաբերությունների զարգացմանն ու բարենպաստ վարկանիշի ձևավորմանը:***

Ռազմավարության հիմնական ուղղությունները

- Ձևավորել Մասնաճյուղի զարգացման առաջնային կարիքներից բխող նախագծերի և համապատասխան դրամաշնորհային հայտերի փաթեթ, իրականացնել դրանց տարածումը և պոտենցիալ շնորհատուների հավաքագրումը:

- Ընդլայնել և ակտիվացնել կապերը Մասնաճյուղի շրջանավարտների հետ, ներգրավել նրանց Մասնաճյուղի նոր արտաքին կապերի ձևավորմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

Մասնաճյուղում նորովի գործող «համալսարան-արդյունաբերություն» փոխկապակցության կառույց, հիմնական պատվիրատու կազմակերպությունների վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (սկսած 2011/2012 ուստարվանից):

Մասնաճյուղի հետ համագործակցող գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ 50-60:

Մասնաճյուղի շրջանավարտների տվյալների գործող բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով:

Արտասահմանյան, այդ թվում նաև ԱՊՀ երկրների, ակտիվ պարտնյորական կապերի թիվը՝ ըստ գործող պայմանագրերի 2016 թվին՝ 10-12:

ՀՊՃՀ-ում իրականացվող միջազգային նախագծերում և այլ ծրագրերում Մասնաճյուղի մասնակցություն (3-4 ծրագրում):

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Շարադրված ռազմավարական պլանավորումը կոչված է գնահատելու, թե ինչ է ցանկանում ձեռնարկել ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղը տվյալ տարածաշրջանում իր առաքելությունը և հիմնական նպատակները երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ կերպով իրականացնելու համար: Սույն Ռազմավարական ծրագիրը նախատեսում է համապատասխան բնագավառներում Մասնաճյուղի առկա ձեռքբերումների ժամանակավոր պահպանում՝ հետագա էական առաջընթացի ապահովման միտումով: Միևնույն ժամանակ, տվյալ Ռազմավարական ծրագիրն, ինչպես և նախորդները, զարգացման բնավ կոշտ ծրագիր չէ և ենթակա է ընթացիկ շտկումների՝ չկանխատեսված միջավայրային փոփոխություններին համահունչ: Վերջիններս կարող են ծնել նոր հնարավորություններ և մարտահրավերներ, որոնց պետք է արձագանքել, կամ՝ նոր արտաքին վտանգներ ու սպառնալիքներ, որոնց Մասնաճյուղը ամբողջ Համալսարանի հետ համատեղ ստիպված կլինի դիմագրավել: Ծրագիրն ուրվագծում է, թե որտեղ է մտադիր լինել Մասնաճյուղը 2016 թվին:

Պլանավորման գործընթացի հաջորդ փուլը ենթադրում է երկու հիմնական գործառույթներ՝ ընթացիկ պլանավորում և ծրագրի կատարում: Եթե Ռազմավարական ծրագիրը ներկայացնում է Մասնաճյուղի զարգացման հիմնական ռազմավարական խնդիրներն ու ուղղությունները, ապա ընթացիկ պլանավորման փուլում կրթօջախի յուրաքանչյուր ստորաբաժանում պետք է ստեղծի օպերատիվ ծրագրեր՝ նախատեսելով այն կոնկրետ գործողությունների հաջորդականությունը, որոնք անհրաժեշտ են Ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակների իրագործման և փոփոխությունների կատարման համար: